

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ՄՈՏ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 25-ԻՆ
ԺԱՄԸ 14:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՏԱՌՆԵՐԻ
ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ
ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

**քաղ. Երևան
Մասնակցում էին՝**

Ս. Կարապետյան	ՀՀ գյուղատնտեսության նախարար
Ա. Գրիգորյան	ՀՀ բնապահպանության նախարար
Ա. Երիցյան	ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարար
Մ. Սարգսյան	ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահ
Պ. Սաֆարյան	ՀՀ ֆինանսների նախարարի առաջին տեղակալ
Կ. Արեյան	Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ
Ս. Սահակյան	ՀՀ Արագածոտնի մարզպետ
Ս. Խաչատրյան	ՀՀ Սյունիքի մարզպետ
Հ. Աբովյան	ՀՀ Տավուշի մարզպետ
Հ. Սարգսյան	ՀՀ Վայոց ձորի մարզպետ
Ա. Հարությունյան	ՀՀ Կոտայքի մարզպետ
Ռ. Գրիգորյան	ՀՀ Գեղարքունիքի մարզպետ
Ա. Նալբանդյան	ՀՀ Լոռու մարզպետ
Ռ. Ալավերդյան	ՀՀ քաղաքաշինության նախարարի տեղակալ
Մ. Մաթևոսյան	«Հայանտառ» ՊՈԱԿ-ի գլխավոր տնօրեն
Ն. Սարգսյան	«Կանաչների երկիր» հասարակական կազմակերպության նախագահ
Հ. Սանասարյան	«Հայաստանի կանաչների միություն» հասարակական կազմակերպության նախագահ

Կ. Դանիելյան	«Հանուն կայուն մարդկային զարգացման ասոցիացիա» հասարակական կազմակերպության նախագահ
Կ. Մարգարյան	ՀՀ կառավարության աշխատակազմի տարածքային զարգացման և բնապահպանական վարչության պետ
Յու. Զավադյան	ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնա- դրամի գործադիր տնօրեն
Լ. Գրիգորյան	ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի գլխավոր հաշվապահ
Ա. Մարգարյան	ՀՀ կառավարության աշխատակազմի տարածքային զար- գացման և բնապահպանական վարչության գլխավոր մասնագետ

1. ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի 2014 թվականի հրապարակման ենթակա հաշվետվության և գործադիր տնօրենի 2014 թվականի հաշվետվությունը՝ հիմնադրամի ֆինանսատնտեսական գործունեության մասին

(Յուրի Զավադյան, Հովիկ Աբրահամյան)

Օրակարգի 1-ին հարցը զեկուցեց ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի գործադիր տնօրեն Յուրի Զավադյանը:

Քննարկումներից հետո որոշվեց՝ հաստատել ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի 2014 թվականի հրապարակման ենթակա հաշվետվությունը և գործադիր տնօրենի 2014 թվականի հաշվետվությունը՝ հիմնադրամի ֆինանսատնտեսական գործունեության մասին:

2. ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի 2014 թվականի ֆինանսական հաշվետվության մասին

(Յուրի Զավադյան, Հովիկ Աբրահամյան)

Օրակարգի 2-րդ հարցը զեկուցեց ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի գործադիր տնօրեն Յուրի Զավադյանը:

Քննարկումներից հետո որոշվեց՝ հաստատել ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի 2014 թվականի ֆինանսական հաշվետվությունը:

3. ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի 2015 թվականի հաստիքացուցակի և գործադիր մարմնի պահպանման (վարչակառավարչական) ապարատի ծախսերի նախահաշվի մասին

(Յուրի Զավադյան, Հովիկ Աբրահամյան)

Օրակարգի 3-րդ հարցը զեկուցեց ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի գործադիր տնօրեն Յուրի Զավադյանը:

Քննարկումներից հետո որոշվեց՝

Հաստատել ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի 2015 թվականի հաստիքացուցակը և գործադիր մարմնի պահպանման (վարչակառավարչական) ապարատի ծախսերի նախահաշիվը՝ 20,1 մլն դրամ գումարով:

4. ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի 2015 թվականի իրականացվելիք ծրագրերի և ֆինանսավորման աղբյուրների մասին

(Յուրի Զավադյան, Հովիկ Աբրահամյան)

- 4.1. «Երևանի անտառտնտեսության Էրեբունու անտառապետության 51 հեկտար տարածքի անտառապատման աշխատանքների (2-րդ փուլ) ծրագրի շարունակման մասին
- 4.2. ՀՀ Տավուշի մարզի Արծվաբերդի անտառտնտեսության, ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակի անտառտնտեսության, ՀՀ Շիրակի մարզի Գյումրիի անտառտնտեսության տարածքներում 35 հեկտարի վրա անտառտնկումների և ցանկապատման աշխատանքների իրականացման ծրագրի շարունակման մասին
- 4.3. 2015 թվականին «Հայանտառ» ՊՈԱԿ-ի անտառտնտեսություններում 10 հեկտար տարածքի անտառապատման և 100 հեկտար տարածքի կոճղաշիվային վերածի օժանդակման աշխատանքների իրականացման ծրագրի մասին

Օրակարգի 4-րդ հարցը զեկուցեց ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի գործադիր տնօրեն Յուրի Զավադյանը:

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հավանություն տալ ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի 2015 թվականի իրականացվելիք ծրագրերին, մասնավորապես՝

1.1. Թույլատրել ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի գործադիր տնօրեն Յուրի Զավադյանին շարունակել «Երևանի անտառտնտեսության «Էրեբունու անտառապետության» 51 հեկտար տարածքի անտառապատման

աշխատանքներ» (2-րդ փուլ) ծրագրի շրջանակներում 31 հա տարածքի անտառապատման աշխատանքները 2 էտապով՝ 2015 թվականին՝ 15 հա, 2016 թվականին՝ 16 հա:

Ծրագրի ֆինանսավորումն իրականացնել չկատարված աշխատանքների մնացորդային գումարի՝ 4,17 մլն դրամի և «Հայանտառ» ՊՈԱԿ-ի ֆինանսական միջոցների հաշվին:

1.2. Թույլատրել ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի գործադիր տնօրեն Յուրի Զավադյանին շարունակել Տավուշի մարզի Արծվաբերդի անտառտնտեսության, Գեղարքունիքի մարզի Ճամբարակի անտառտնտեսության, Շիրակի մարզի Գյումրիի անտառտնտեսության տարածքներում 35 հեկտարի վրա անտառտնկումների և ցանկապատման աշխատանքների իրականացման ծրագիրը:

Ծրագրի ֆինանսավորումն իրականացնել չկատարված աշխատանքների մնացորդային գումարի՝ 12,67 մլն դրամի սահմաններում:

1.3. Հաստատել 2015 թվականի «Հայանտառ» ՊՈԱԿ-ի անտառտնտեսություններում 10 հա տարածքի անտառապատման և 100 հա կոճղաշիվային վերածի օժանդակման աշխատանքների իրականացման ծրագիրը՝ 34,89 մլն դրամ նախնական արժեքով.

2) հաշվի առնելով աշխատանքների շարունակականությունն ու հրատապությունը՝ թույլատրել ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի գործադիր տնօրեն Յուրի Զավադյանին «Հայանտառ» ՊՈԱԿ-ի անտառտնտեսություններում 10 հա տարածքի անտառապատման և 100 հեկտարի վրա կոճղաշիվային վերածի օժանդակման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների կատարման և անտառապատման ու ցանկապատման աշխատանքների իրականացման կապալառու կազմակերպություններին ընտրել բանակցությունների միջոցով.

3) հանձնարարել ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանին, ՀՀ ֆինանսների նախարար Գագիկ Խաչատրյանին և ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի գործադիր տնօրեն Յուրի Զավադյանին՝ քննարկել ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի 2015 թվականին իրականացվելիք ծրագրերի և 2015 թվականի գործադիր մարմնի (վարչակառավարչական) ապարատի պահպանման ծախսերի ֆինանսավորման աղբյուրների հարցն ու ներկայացնել առաջարկություն.

4) հանձնարարել ՀՀ բնապահպանության նախարար Արամայիս Գրիգորյանին՝ ուսումնասիրել Շորժայի տարածքի և մայրուղիների բարենպաստությունը՝ ծառատունկի տեսանկյունից և մինչև 2015 թվականի հունիս ամիսը ՀՀ վարչապետ Հովիկ Աբրահամյանին զեկուցել արդյունքների մասին.

5) հանձնարարել ՀՀ մարզպետներին՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ներկայացնել ծառատունկի համար պահանջվող տնկիների թվի մասին հայտեր.

6) առաջարկել Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանին ՀՀ վարչապետ Հովիկ Աբրահամյանի մոտ քննության առնել Ծիծեռնակաբերդի անտառ-պուրակի տարածքի խնամքի և պահպանման՝ Երևանի քաղաքապետարանի կողմից իրականացվելու հնարավորության հարցը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ

ՀՈՎԻԿ ԱՐԲԱՀԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՆՏԱՌՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԵՎ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՏՆՕՐԵՆ

ՅՈՒՐԻ ԶԱՎԱԴՅԱՆ